ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

-- հունվարի 2022 թվականի №---Ա

քաղ. Երևան

«ԹԻՄ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼԸ ԿԱԶՄՈՂ ԲԱԺՆԵՏՈՄՍԵՐԻ ԳՐԱՎԱԴՐՄԱՆԸ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով՝

ա) Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2020 թվականի սեպտեմբերի 9-ի №313Ա որոշումը, որով համաձայնություն է տրվել «ԹԻՄ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության (այսուհետ՝ Ընկերություն) կանոնադրական կապիտալի 100 տոկոսը կազմող բաժնեմասերը «Արդշինբանկ» և(կամ) «Ամերիաբանկ» փակ բաժնետիրական ընկերությունների օգտին գրավադրելուն: Նշվածը հետագայում վարկային միջոցների հաշվին (այսուհետ՝ Վարկ) Ընկերության կողմից ֆինանսավորում ստանալու ապահովման միջոց է հանդիսացել,

բ) Ընկերության 2021 թվականի դեկտեմբերի 2-ի և 3-ի համապատասխանաբար №26, №27 գրությունները, որոնց համաձայն՝ Ընկերությունը հայտնել է, որ Վարկի վերաֆինանսավորման և «Տելեկոմ Արմենիա» փակ բաժնետիրական ընկերության կապիտալ ծախսերի ֆինանսավորման նպատակով վերջինիս հետ համատեղ նախաձեռնել են միջազգային ֆինանսական հաստատություններից՝ Միջազգային ֆինանսական կորպորացիայից (IFC), Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկից (EBRD) և «Ամերիաբանկ» փակ բաժնետիրական ընկերությունից (այսուհետ՝ Գրավառու(ներ) վարկային միջոցների ներգրավման գործընթաց, ինչի կապակցությամբ Ընկերությունը խնդրել է համաձայնություն տալ Ընկերության կանոնադրական կապիտալը կազմող 100 տոկոս բաժնեմասերը (բաժնետոմսերը) (ամբողջությամբ կամ մասամբ, որպես առաջնային կամ հաջորդող գրավ՝ ցանկացած համամասնություններով ու համադրություններով) Գրավառու(ներ)ի օգտին գրավադրելուն (այսուհետ՝ Գործարք),

գ) որ 2021 թվականի դեկտեմբերի 30-ին Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի

գործակալության կողմից գրանցվել է Ընկերության կազմակերպական-իրավական ձևի փոփոխությունը փակ բաժնետիրական ընկերության,

դ) Հայաստանի Հանրապետության բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության 2021 թվականի դեկտեմբերի 30-ի №01/11.1/8579-2021 գրությունը, որի համաձայն՝ վերջինս իր իրավասության շրջանակում չի առարկում Ընկերության կանոնադրական կապիտալը կազմող 100 տոկոս բաժնետոմսերը Գրավառու(ներ)ի օգտին գրավադրելուն, և

հիմք ընդունելով «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» օրենքի 14-րդ հոդվածը, «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ մասը՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը **որոշում է.**

1. Համաձայնություն տալ Գործարքին:
2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետով տրված համաձայնությունը Գործարքի կնքման համար վավեր է սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից վեց ամսվա ընթացքում:
3. Ընկերությանը՝ Գործարքի կնքումից հետո երկշաբաթյա ժամկետում Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով ներկայացնել դրան առնչվող փաստաթղթերը:
4. Սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում կարող է բողոքարկվել Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով կամ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան, և դրա բողոքարկումը չի կասեցնում որոշման գործողությունը կամ կատարումը:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Ընկերությանն օրենքով սահմանված կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ **Գ. ԲԱՂՐԱՄՅԱՆ**

ք. Երևան
-- հունվարի 2022թ.